

8363



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

« 09 » 08 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 144 - 24

Նախաձեռնող՝

Գործունեությունը՝

Առդիր՝ 6 թերթ

«ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍՊԸ

ք. Իջևան, Անկախության փողոց, 4 շենք

Մայիսյան բնակավայրի Այգեգործական 4-րդ

թաղամասի 12-րդ փողոց հասցեում

խոզաբուծական համալիրի կառուցում

Արմավիրի մարզ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 144 - 24

« 01 » օգոստոսի 2024թ.

Արմավիրի մարզի Մայիսյան բնակավայրի Այգեգործական 4-րդ թաղամասի 12-րդ փողոց հասցեում նախատեսվող խոզաբուծական համալիրի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝  
Փաստաթղթային փաթեթ՝

Գտնվելու վայրը՝

«ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍՊԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Մայիսյան բնակավայր

**Ներածական մաս.** «ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍՊԸ-ն նախատեսում է Արմավիրի մարզի Մայիսյան բնակավայրի Այգեգործական 4-րդ թաղամասի 12-րդ փողոց հասցեում կառուցել խոզաբուծական համալիր՝ ներդրումային ծրագրով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 13-րդ կետի «դ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ: Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք են հանդիսացել պատվիրատուի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները՝ N 26062024-04-0046, ծածկագիրը՝ 04-043-0962-0003 և N26062024-04-0028/ ծածկագիրը՝ 04-043-0963-0001, Արմավիր համայնքապետարանի կողմից տրամադրված նախագծման թույլտվությունը՝ N 38, տրված՝ 07.03.2024թ. և N 108, տրված՝ 13.06.2024թ. :

Հողամասերի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Ներդրումային ծրագրի լիարժեք իրականացման նպատակով «ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍՊԸ-ն նախատեսում է ձեռք բերել նաև հարակից համայնքային հողամասերը՝ 04-043-0964-0001, 04-043-1004-0001 և 04-043-1003-0009 կադաստրային կոդերով:

**Նկարագրական մաս.** «ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍՊԸ-ն նախատեսում է Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան բնակավայրի Այգեգործական 4-րդ թաղամաս 12-րդ փողոց հասցեում գտնվող՝ նախկինում գործող խոզաբուծարանի տարածքում նախատեսվում է կառուցել նոր խոզաբուծական ֆերմա:









նաև կենցաղային աղբ՝ 1.875 տ/տարի: Առաջացած թափոնները կտեղափոխվեն աղբահավաք ծառայության կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել աղբամաններ: Աղբահեռացումը կատարվելու է տեղական ինքնակառավարման մարմնի հետ համաձայնեցված:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Տարածքի շրջագծով կտնկվեն պտղատու ծառեր, որոնք հնարավորինս կկանխարգելեն կենդանիներեին բնորոշ հոտի տարածումը և իրենց վրա կկրեն արտանետվող գազերի մեծ մասը:

Բարեկարգման և կանաչապատ գոտիների կազմակերպման աշխատանքների իրականացման ժամանակ կիրականացվի հարակից համայնքային հողերի ռեկուլտիվացիա՝ և կստեղծվի 0.31 հա մակերեսով կանաչ գոտի: Կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ բուսահողը ձեռք կբերվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է մաքրման կայանից հեռացվող ջրերով:

Խոզաբուծական համալիրի շահագործման ընթացքում իրականացվելու է խոզերի բազմացում, աճեցում, բուում՝ հոսքային տեխնոլոգիաների կիրառմամբ, որը հիմնված է լինելու կենդանիների տարբեր խմբերի առանձնացման, նրանց կերակրման և մասնագիտացված պահման վրա: Խոզանոցներում նախատեսվում է թեք ճեղքային հատակներ, որոնց տակ տեղադրված են կուտակման տարողություններ, որտեղ հատուկ բակտերիաների ավելացման շնորհիվ սկսվելու են գոմաղբի խմորման, վարակազերծման գործընթացները: Գոմաղբի նախնական մաքրումը՝ մանրէների միջոցով, թույլ կտա խուսափել գոմաղբին բնորոշ հոտից և ստանալ վարակազերծված հեղուկ միջանկյալ արգասիք: Կուտակված և նախապես վերամշակված գոմաղբը՝ ողողման ջրերի հետ համատեղ հավաքվելու է հատուկ տարողություններում, որտեղ տեղի է ունենալու գոմաղբի խմորում: Խմորված ու վարակազերծված նստվածքը պարբերաբար հանվելու են, չորացվելու բնական պայմաններում և վաճառվելու է որպես պարարտանյութ: Գոմաղբի լցարանների հատակը և պատերը բետոնից են նախատեսված, որպեսզի կեղտաջրերի ներծծումը գրունտային ջրեր բացառվի: Առաջացող կեղտաջրերն ուղղվելու են մաքրման կառույց, որտեղ ենթարկվելու են մանրէաբանական, մեխանիկական և կենսաբանական եղանակներով մաքրման: Առաջացած հոսքաջրերն օգտագործվելու են ոռոգման և հողի խոնավացման համար: Խոզաբուծական համալիրի մեջ մտնում է նաև համակցված կերի տեղամասը: Տարբեր տեսակի հացահատիկները ուղղվում են մրճավոր ջարդիչ, որից հետո ստացված զանգվածին խառնվում են անհրաժեշտ բաղադրամասերը: Տեղամասի վրա տեղադրված կլինի ճկափողային գոտի՝ 90% արդյունավետությամբ, որի շնորհիվ արտանետվող օդը մաքրվում է փոշուց: Հտիչում կուտակված փոշին հանվելու և օգտագործվելու է կերի պատրաստման տեղամասում:

Կենդանիների տարեկան կանխատեսվող անկումը գնահատվում է 3,427 տոննա: Ընկած կենդանիները այրվելու են դիակիզարանում՝ բարձր ջերմաստիճանի տակ: Տարածքում տեղադրվելու է մեկ «Burn Mizer» մակնիշի, 545 կգ առավելագույն բեռնավորությամբ վառարան: Վառարանից դուրս եկող գազերը մուտք են գործելու ետայրման խցիկ և չեզոքացվելու են: Ընկած կենդանիների այրում թույլ կտա խուսափել վարակների և այլ հիվանդությունների տարածումից:

Համալիրի շահագործման ընթացքում դիտվելու են տարբեր տեսակի արտանետումներ շրջակա միջավայր՝ մասնավորապես մթնոլորտային օդ, որոնց մեջ են





մտնում կենդանիների կենսագործունեությունից առաջացած թափոններ, կենդանիներին բնորոշ հոտ, կերերի գործարանից առաջացող փոշի, դիակիզարանից արտանետվող այրված գազեր և այլն: Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի ցրման հաշվարկները կատարվել են համակարգչային՝ «էկոլոգ 4.6» ծրագրով: Վնասակար նյութերի մերձգետնյա կոնցենտրացիաները որոշվել են հաշվարկային հարթակի մակերեսով, որոնք գտնվում են սանիտարապաշտպանիչ գոտու եզրագծին և մոտակա բնակելի գոտում: Մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքում հաստատված է, որ սպասվելիք մերձգետնյա կոնցենտրացիաները գտնվելու են սահմանված նորմերում: Խոզանոցները, համակցված կերերի գործարանը և դիակիզարանը զինված են լինելու ճկափողային զտիչներ, որոնք կլանելու են մթնոլորտ արտանետվող գազերի զգալի քանակությունը, որի շնորհիվ արտանետվող գազերի քանակությունը լինելու է թույլատրելի նորմայի սահմաններում:

Հաշվի առնելով ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված ազդեցությունների գումարային տվյալները և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» շինարարական նորմերը, համալիրի սանիտարապաշտպանիչ գոտու չափը սահմանվել է 300 մետր:

Համալիրի շահագործման և շինարարության ընթացքում օգտագործվելու է խորքային հորի ջուրը, որի համար «ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍՊԸ-ին տրվել է ջրօգտագործման թույլտվություն: Խորքային հորի ջուրը օգտագործվելու է կենդանիների խմելու, կեր պատրաստելու, գոմը մաքրելու, տնտեսության բաց հրապարակները ոռոգելու, ինչպես նաև աշխատողների տնտեսակենցաղային կարիքների համար: Ներկայացվել է ջրապահանջի հաշվարկ խոզերի խմելու, կերը պատրաստելու, նոր ծնված խոզերին լվանալու, խոզերի պահման բոլոր կարիքներ հոգալու, ինչպես նաև սանիտարական և աշխատողների տնտեսակենցաղային կարիքների համար, որպեսզի հնարավորիս չափ մեղմացվի կամ բացառվի ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը: Խոզաբուծական համալիրում աշխատելու է 22 մարդ: "Խելացի գոմ" սկզբունքներով գործող համալիրում ամբողջ սարքավորումների աշխատանքը ավտոմատացված է:

Խոզաբուծական համալիրի կառուցման և շահագործման համար ներկայացվել է բնապահպանական կառավարման պլան, որը պարունակում է շինարարության և շահագործման փուլերում հնարավոր բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումներ, ինչպես նաև մոնիթորինգի իրականացման ծրագիր՝ ստուգելու շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը նախատեսվող մեղմացնող միջոցառումներին:

Համալիրի կառուցման և շահագործման ընթացքում նախատեսվում է իրականացնել մթնոլորտային օդում արտանետումների (փոշի, CO, NO<sub>x</sub>) չափումներ, աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ, ինչպես նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումներ, որի ընթացքում կաչողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

**Պատճառաբանական մաս.** Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հանրային ծանուցումը և քննարկումներն իրականացվել են Արմավիր համայնքում: Հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:





Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել լրամշակումներում:

Կատարվել է նաև տարածքի տեղագնում փորձագետի կողմից՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով: Ներկայացվող գործունեության շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների և մթնոլորտ արտանետվող գազերի և փոշու մասնիկների հետ: Այս ազդեցությունները ունենալու են տեղային և ժամանակավոր բնույթ:

Շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները պայմանավորված են լինելու հիմնականում մթնոլորտ արտանետվող նյութերով՝ կենդանիների կենսագործունեության արդյունքում առաջացող թափոնների, համակցված կերերի գործարանից արտանետվող փոշու, դիակիզարանից դուրս եկող այրված գազերի և կենդանիներին բնորոշ հոտով:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ խոզաբուծական համալիրի կառուցման և շահագործման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կունենան տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմացվել բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

### Փորձաքննական պահանջներ

1. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել Արմավիր համայնքին պատկանող հողամասերի օգտագործման թույլտվությունները:
2. Համալիրի շինարարության ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները:
3. Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներն իրականացնել՝ Արմավիրի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
4. Շինարարության և շահագործման ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի /մշտադիտարկումներ/ կառավարման պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
5. Շինարարական աշխատանքների ընթացքում, համաձայն Կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշման 43-րդ կետի, որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին:





